Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի ռեկտոր, Գխ Նախագահ
Ն. Խ. Մարիբեկյան
«   » _____________ 20/4 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Ավանդական բժշկության համալսարանի /այսուհետ՝ ԱԲՀ/ կողմից իրականացվող մասնագիտական կրթական ծրագրի /այսուհետ՝ ՄԿԾ/ մշակման, վերանայման, գնահատման և հաստատման գործընթացները:
2. ՄԿԾ-ի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման կանոնակարգը /այսուհետ կանոնակարգ/ հաստատում և դրանում փոփոխություններ է իրականացնում ԱԲՀ գիտական խորհուրդը:
3. Սույն կանոնակարգը բխում է ՀՀ օրենսդրության, ԱԲՀ կանոնադրության, ռազմավարության և համապատասխան իրավական ակտերի դրույթներից:

II. Մասնագիտական կրթական ծրագրի մշակման և վերանայման ընթացակարգ

4. ՄԿԾ-ի մշակման և գործող ՄԿԾ-ի վերանայման առաջարկությունը ներկայացնում է բուհի կառավարման մարմիններից մեկը և/կամ համապատասխան ուսումնական ստորաբաժանումը:
5. ՄԿԾ-ի մշակումը կամ գործող ՄԿԾ-ի վերանայումն իրականացնում է համապատասխան աշխատանքային խումբը: Աշխատանքային խմբի կազմը և ղեկավարին նշանակում է ԱԲՀ ռեկտորը:
6. Աշխատանքային խմբի ղեկավարը համակարգում է խմբի աշխատանքները և սահմանում աշխատանքների իրականացման ժամանակացույց:
7. ՄԿԾ-ի մշակման և իրականացման գործընթացում աշխատանքային խումբն առաջնորդվում է՝

- ՀՀ օրենսդրությամբ,
- ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչներով,
- ԱԲՀ գիտական խորհրդի որոշումներով,
- ԱԲՀ Ռազմավարական ծրագրի առաքելությամբ և տեսլականներով,
- աշխատաշուկայի և այլ շահակիցների պահանջների վերլուծության արդյունքներով,
- կրթական վերջնարդյունքների մասին հավաքագրված տվյալներով և վերլուծությունների արդյունքներով,
- ազգային և միջազգային առաջավոր փորձի համամատական վերլուծության արդյունքներով:

8. ՄԿԾ-ի մշակման կամ վերանայման գործողությունները միտված են՝
- ՀՀ ՈԱԾ-ի բնութագրիչներին ՄԿԾ-ի վերջնարդյունքների համապատասխանությանը,
- կրթական բաղադրիչների և առանձին դասընթացների վերջնարդյունքների համապատասխանությանը ՄԿԾ-ի վերջնարդյունքներին,
- դասավանդման և ուսումնառության մեթոդների և գնահատման գործողությունների՝ ՄԿԾ-ի և նրա առանձին բաղադրիչների կրթական վերջնարդյունքների ստացմանը,
- ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձեռքբերման համար կրեդիտներով արտահայտված հիմնավորմանը:

9. ՄԿԾ-ն փաստաթղթավորվում և ներկայացվում է կրթական ծրագրի մասնագրի հատուկ փաթեթով՝ ըստ սույն կանոնակարգի և համապատասխան մեթոդական ուղեցույցի:

10. ՄԿԾ-ն փաստաթղթավորվում և ներկայացվում է մասնագրի փաթեթով, որում ներառվում են՝
- լիազոր մարմնի կողմից մասնագիտության լիցենզավորման փաստաթուղթը,
- ՄԿԾ-ի պետական հավատարմագրման փաստաթուղթը,
- լրացված ձևաթուղթը:

11. Լրացված ձևաթղթում պետք է ներառված լինի՝
- ընդհանուր դրույթներ,
- ներածություն,
- անվանումը և մասնագիտության թվանիշը,
- նպատակը և խնդիրները,
- շնորհվող որակավորման աստիճանը,
- ուսուցման լեզուն,
- ուսուցման ձևը (առկա),
- ընդունելության չափանիշները,
- ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքները (գիտելիք, հմտություններ ու կարողություններ),
- դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներն ու ձևերը,
- ՄԿԾ-ի ուսումնական պլանը, որը ներառում է կրթական բաղադրիչներն ըստ ուսումնական տարիների և կիսամյակների (ներառյալ պրակտիկաները և ամփոփիչ ատեստավորման ձևերը),
- ուսումնական պլանի քարտեզը, որը արտացոլում է ՄԿԾ-ի և նրա կրթական բաղադրիչների վերջնարդյունքները,

- լրացուցիչ տեղեկատվություն կրթական ծրագրի վերաբերյալ:

III. Մասնագիտական կրթական ծրագրի գնահատման և հաստատման ընթացակարգը

12. ՄԿԾ-ի գնահատումը և հաստատումն իրականացվում են հետևյալ փուլերով.
    - հիմնավորում աշխատանքային խմբի կողմից,
    - ԱԲՀ-ի որակի ապահովման հանձնաժողովի կարծիքի տրամադրում,
    - գիտական խորհրդի հաստատում:
13. ԱԲՀ գիտական խորհուրդը հաստատում է ՄԿԾ-ն ըստ հետևյալ պահանջների՝
    - ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների համապատասխանությունը ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչներին,
    - ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների համապատասխանությունը ԱԲՀ-ի և ուսումնական ստորաբաժանումների առաքելություններին և ռազմավարական նպատակներին,
    - ՄԿԾ-ի նախատեսվող կրթական վերջնարդյունքների պատշաճ ձևակերպումները՝ ըստ չափելության սկզբունքի բավարարման,
    - դասավանդման և ուսումնառության ու գնահատման մեթոդների համապատասխանությունը կրթական վերջնարդյունքների ստացմանը,
    - ուսանողի բեռնվածության և կրեդիտների հաշվեկշռի համապատասխանությունը,
    - առկա մարդկային, ֆինանսական և այլ ռեսուրսների հետ համապատասխանությունը:

VI. Եզրափակիչ դրույթներ

14. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի հաստատումից և հրապարակումից հետո: